



**Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ**

**2012-2013 թթ. մրցաշրջանի ֆուտբոլի պատանեկան,  
մանկապատանեկան, մանկական մրցումների**

Երևան – 2012

Հաստատում եմ  
ՀՖՖ առաջին փոխնախագահ,  
Գործադիր տնօրեն

Ա.Մինասյան

< \_\_\_\_\_ > 2012թ.

## Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

### 2012-2013թթ. մրցաշրջանի ֆուտբոլի պատանեկան, մանկապատանեկան, մանկական մրցումների

#### ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Կանոնակարգում օգտագործված հասկացությունների սահմանումները.

1. **ՀՖՖ** - Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա
2. **Մրցումներ** – ՀՖՖ հովանու ներքո կազմակերպված պատանեկան, մանկապատանեկան և մանկական առաջնություններ, մրցաշարեր:
3. **Ֆուտբոլային սուբյեկտ** - Իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը մասնակցում /առընչվում/ է մրցումներին:
4. **Ակումբ** - Իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն, այդ թվում մարզական ակումբ, մարզադպրոց, հանրակրթական դպրոց, տեղական ինքնակառավարման մարմին, ՍՊԸ կամ այլ կազմակերպություն, որը թիմ(եր) է ներկայացնում մրցումներին մասնակցելու համար, ներդրումներ է կատարում ֆուտբոլի զարգացման, ֆուտբոլիստների մարզման և ուսուցման ոլորտներում:
5. **Պաշտոնական խաղեր** – Մրցումների շրջանակներում անցկացվող խաղեր:
6. **Մրցաշրջան** - Ֆուտբոլային տարվա կտրվածքով առաջին պաշտոնական խաղով սկսվող և վերջին պաշտոնական խաղով վերջացող ժամանակահատված:
7. **Խաղային ժամանակահատված** - Խաղից մեկ ժամ առաջ սկսած և մինչև 30 րոպե խաղավարտից հետո ընկած ժամանակահատվածը:
8. **Ֆուտբոլային անձնագիր** - ՀՖՖ-ից ստացած ֆուտբոլիստի անձնագիր:

## **I. Ներածական դրույթներ**

### **Հոդված 1 Գործողությունների շրջանակները**

1. Սույն Կանոնակարգով կարգավորվում են.
  - ՀՖՖ կողմից անցկացվող մրցումների կազմակերպման և անցկացման գործընթացը,
  - ֆուտբոլիստի՝ մրցումներին մասնակցելու կանոնները,
  - Ֆուտբոլային սուբյեկտների իրավունքները, պարտականություններն ու իրավահարաբերությունները:

### **Հոդված 2 Մրցումների նպատակը**

1. Նպատակն պատանեկան, մանկապատանեկան և մանկական ֆուտբոլի հետագա զարգացմանը:
2. Նպատակն ֆուտբոլիստների մասնագիտական որակների և ուսուցման պրոցեսի մակարդակի հետագա բարձրացմանը:
3. Նպատակն «Արդար խաղի» սկզբունքների արմատավորմանը:
4. Ապահովել ազգաբնակչության պատանեկան հասակի երեխաների և դեռահասների համակողմանի ֆիզիկական զարգացումը:
5. Ի հայտ բերել հեռանկարային, խոստումնալից, տաղանդավոր ֆուտբոլիստներին:
6. Նպատակն բարձրագույն և առաջին խմբերի թիմերի համալրման համար արժանի հերթափոխի պատրաստման գործընթացին:
7. Ի հայտ բերել առաջնությունների /ըստ տարիքային խմբերի/ լավագույն ֆուտբոլիստներին, ռմբարկուներին և այլ մրցանակակիրներին:
8. Ի հայտ բերել տարբեր տարիքային խմբերում Հայաստանի չեմպիոններին ու մրցանակակիրներին:
9. Նպատակն պատանեկան ազգային հավաքական թիմերի ձևավորմանը:

## **II. Մրցումների անցկացման պայմանները**

### **Հոդված 3 Մրցումների ղեկավարումը և ցանկը**

1. Մրցումների ընդհանուր ղեկավարումն ու հսկողությունն իրականացնում է ՀՖՖ-ն, որը մասնավորապես՝
  - հաստատում է մրցումների կանոնակարգն ու խաղացանկերը,
  - արտոնագրում է մարզադաշտերը,
  - սահմանում է մրցումների մասնակցության մուտքավճարները,
  - իրականացնում է թիմերի հայտավորման ընթացակարգը,
  - կազմակերպում է խաղերը և իրականացնում դրանց հսկողությունը,
  - ամփոփում և հաստատում է առաջնությունների արդյունքները, իրականացնում է մրցանակակիրների պարգևատրումը,
  - իրականացնում է սույն կանոնակարգից բխող այլ գործառույթներ:
2. Մրցումները անցկացվում են հետևյալ տարիքային խմբերով՝
  - մինչև 18 տարեկանների /Մ18/ պատանեկան ՀՀ առաջնություն /1995թ. ծնվածների/,
  - մինչև 17 տարեկանների /Մ17/ պատանեկան ՀՀ առաջնություն /1996թ. ծնվածների/,
  - մինչև 16 տարեկանների /Մ16/ պատանեկան ՀՀ առաջնություն /1997թ. ծնվածների/,
  - մինչև 15 տարեկանների /Մ15/ մանկապատանեկան ՀՀ առաջնություն /1998թ. ծնվածների/,
  - մինչև 14 տարեկանների /Մ14/ մանկապատանեկան ՀՀ առաջնություն /1999թ. ծնվածների/,

- մինչև 13 տարեկանների /Մ13Ե/ մանկական Երեսանի առաջնություն /2000թ. ծնվածների/,
  - մինչև 13 տարեկանների /Մ13/ մանկական ՀՀ առաջնություն /2000թ. ծնվածների/;
3. Առաջնությունները, բացառությամբ Մ13-ի /տես Հ 5.4/, անցկացվում են առանձին խմբերով /ենթախմբերով/, շրջանաձև մրցակարգով, երկու շրջանով՝ թիմերը հանդիպում են միմյանց սեփական և մրցակցի խաղադաշտերում:
  4. Առաջնություններին մասնակցելու համար մուտքավճար չի սահմանվում, բացառությամբ Մ18 առաջնությունը, որին մասնակցելու համար սահմանված է մուտքավճար 20 000 դրամ:
  5. Մասնակից թիմի ծախսերը (ճանապարհածախս, օրապահիկ, գիշերավարձ) հոգում է թիմը ներկայացնող Ակումբը:

**Հոդված 4 Մրցումներին մասնակից թիմերը**

1. Մրցումներին կարող են մասնակցել այն Ակումբների /կազմակերպությունների/ թիմերը, որոնք ընդունում են ՀՖՖ Կանոնադրությունը և պարտավորվում են կատարել դրա, ինչպես նաև սույն կանոնակարգի պահանջները, մուծում են սահմանված մուտքավճար, և այլ պարտադիր վճարներ:  
/Մ18 առաջնության մուտքավճարի մուծման վերջնաժամկետն է «Հավաստագրի» ներկայացման օրը/:
2. Թիմերը ներկայացնող Ակումբները /կազմակերպությունները/ հաստատում են իրենց թիմի /թիմերի/ մասնակցությունը մրցումներին՝ մինչև ս/ք մարտի 24-ը՝ ՀՖՖ ներկայացնելով սահմանված կարգի «Հավաստագիր» /տես հավելված 1/, որտեղ պետք է նշել թիմի անվանումը, տարիքային խումբը, մարզադաշտը, որտեղ ընդունելու են մրցակիցներին:
3. Թիմերը ներկայացնող Ակումբը /կազմակերպությունը/, առկայության դեպքում, պետք է մարի նախորդ մրցաշրջանում գոյացած դրամական պարտքերը /այդ թվում տուգանքները/, մինչև «Հավաստագիր» ներկայացնելը:
4. Ներկայացվող թիմի անձնակազմի կողմից սույն Կանոնակարգի դրույթների բոլոր խախտումների համար պատասխանատվությունը կրում է ներկայացնող Ակումբը /կազմակերպությունը/:

**Հոդված 5 Մրցումների անցկացման կարգը և անցկացման ժամկետները**

Մ18 և Մ17 առաջնությունները կանցկացվեն մեկ խմբում:

Խաղերի տեսողությունը՝

Մ18 90 րոպե (45 + 45)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով,

Մ17 80 րոպե (40 + 40)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով:

1. Մ16, Մ15 և Մ14 առաջնությունների մասնակից թիմերը ընդգրկվում են 2-ական խմբերում՝
  - «Ա» խումբ - 2011թ. բարձր արդյունք ցուցաբերած 12 թիմ,
  - «Բ» խումբ - 2011թ. ցածր արդյունք ցուցաբերած թիմերը և նոր թիմեր:
 Խմբերում թիմերի ընդգրկումն իրականացվում է ՀՖՖ-ի ՄԿԱ բաժնի և մանկապատանեկան բաժանմունքի կողմից, հաշվի առնելով 2011թ. առաջնություններում թիմերի ցույց տված արդյունքները:  
 Մ16, Մ15 և Մ14 առաջնությունների «Ա» խմբում վերջին երկու տեղ զբաղեցրած թիմերը հաջորդ մրցաշրջանում կտեղափոխվեն «Բ» խումբ, իսկ «Բ» խմբում առաջին երկու տեղ զբաղեցրած թիմերը հաջորդ մրցաշրջանում կտեղափոխվեն «Ա» խումբ:
  - Եթե «Բ» խմբում թիմերի քանակը չի գերազանցի 5-ը, ապա այդ խմբի/երի/ թիմերի խաղերի քանակը կապահովվի միջինը 18 խաղով, /տուն-դուրս/:
  - Եթե «Բ» խմբում թիմերի քանակը գերազանցում է 14-ը, ապա խումբը իր հերթին բաժանվում է ենթախմբերի: Ենթախմբում առաջին և երկրորդ տեղ զբաղված թիմերը օլիմպիական մրցակարգով կորոշվեն «Բ» խմբի առաջին երեք մրցանակակիրները՝

մեկ խաղով կհանդիպեն միմիանց հետ,  
Բ-1 ենթախմբի առաջին տեղ - Բ-2 ենթախմբի երկրորդ տեղ,  
Բ-2 ենթախմբի առաջին տեղ - Բ-1 ենթախմբի երկրորդ տեղ,  
որից հետո հաղթողները կխաղան միմիանց հետ առաջին տեղը որոշելու, իսկ  
պարտվողները երրորդ տեղը որոշելու համար/: Մարզադաշտերը կընտրվեն  
ՀՖՖ-ի կողմից և կտեղեկացվեն լրացուցիչ:

Առաջնությունները կանցկացվեն 2012թ. մայիս մինչև 2013թ. հունիս ամիսներին՝ երկու  
շրջանով /տուն-դուրս/: Խաղերի տևողությունը՝

- Մ16 - 80 րոպե (40 + 40)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով,
- Մ15 - 70 րոպե (35 + 35)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով,
- Մ14 - 60 րոպե (30 + 30)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով:

3. Մ13Ե առաջնության մասնակից թիմերի քանակը մինչև 16 լինելու դեպքում կազմվում է  
մեկ խումբ: 15-ը գերազանցելու դեպքում՝ 2 ենթախումբ: Առաջնության հաղթողին  
որոշելու համար ենթախմբերի առաջին տեղ գրաված թիմերը հանդիպում են միմիանց  
հետ, իսկ առաջնության երրորդ մրցանակակրին որոշելու համար ենթախմբերի  
երկրորդ տեղ գրաված թիմերը հանդիպում են միմիանց հետ: Առաջնությունը  
կանցկացվի ա/թ. մայիս-նոյեմբեր ամիսներին՝ երկու շրջանով /տուն-դուրս/, խաղերի  
տևողությունը՝ 60 րոպե (30 + 30)՝ մինչև 15 րոպե ընդմիջումով:

4. Մ13 առաջնությանը մասնակցում են 16 թիմ. մինչև 12 թիմ մարզերի ներքին առաջնու-  
թյունների հաղթողները կամ հավաքականները, այդ թվում Շիրակի և Լոռու մարզերից  
երկուական թիմ, ու Երևանի առաջնության առաջին չորս տեղերը գրաված թիմերը:  
Մ13 առաջնությունում 16 թիմ չլրանալու դեպքում, կթույլատրվի մարզերում երկրորդ  
տեղ գրաված և Երևանի առաջնության առաջին չորս տեղից հետո հաջորդվող թիմերի  
մասնակցությունը: Որակավորման փուլում ըստ վիճակահանության՝ թիմերը կբա-  
ժանվեն Ա, Բ, Գ, Դ ենթախմբերի: Ենթախմբերում թիմերը կհանդիպեն միմյանց հետ  
մեկ շրջանով, ամեն խմբի համար ընտրված մարզադաշտում՝ /տես Հոդված 14/:  
Ենթախմբերում առաջին և երկրորդ տեղ գրաված թիմերը դուրս են գալիս 1/4  
եզրափակիչ: 1/4 եզրափակիչ դուրս եկած 8 թիմերը բաժանվում են գույգերի՝

- ա/ Ա խմբի առաջին տեղ - Բ խմբի երկրորդ տեղ,
- բ/ Բ խմբի առաջին տեղ - Ա խմբի երկրորդ տեղ,
- գ/ Գ խմբի առաջին տեղ - Դ խմբի երկրորդ տեղ,
- դ/ Դ խմբի առաջին տեղ - Գ խմբի երկրորդ տեղ:

Չույգերի հաղթողները 1/2 եզրափակիչում հանդիպում են՝

- ա/ գույգի հաղթողը և գ/ գույգի հաղթողը
- բ/ գույգի հաղթողը և դ/ գույգի հաղթողը

1/2 եզրափակիչի գույգերի հաղթողները մեկ խաղով որոշում են առաջնության հաղթո-  
ղին, իսկ պարտվողները կմրցեն երրորդ տեղի համար: Խաղերի վայրը որոշվում է  
ՀՖՖ-ի կողմից:


1/4 և 1/2 եզրափակիչ փուլի խաղերի հաղթողները որոշվում են երկու խաղերի արդյուն-  
քով՝ սեփական և մրցակցի դաշտում: 1/4 եզրափակիչի առաջին խաղում «դաշտի տեր»  
թիմ է հանդիսանում խմբերում առաջին տեղը գրաված թիմերը, 1/2 եզրափակիչում ա/ և  
բ/ գույգերի հաղթողները: Երկու խաղերի արդյունքում հավասար միավորների դեպքում  
առավելությունը տրվում է հյուրընկալվելիս ավելի շատ գոլ խփած թիմին, իսկ դրա հա-  
վասարության և եզրափակիչ խաղի արդյունքի հավասարության դեպքում հաղթող  
թիմը որոշվում է 7 մետրանոց հարվածաշարի միջոցով՝ ըստ «Ֆուտբոլ խաղի կանոն-  
ների»:

Առաջնությունը կանցկացվի 2012թ. նոյեմբեր մինչև 2013թ. հունիս ամիսներին, խաղերի  
տևողությունը՝ 60 րոպե (30 + 30) մինչև 15 րոպե ընդմիջումով:

5. Մ13Ե և Մ13 առաջնությունները կանցկացվեն փոքրացված խաղադաշտերում, հետևյալ  
փոփոխված կանոններով՝

- խաղադաշտի չափերը՝ 50-70 երկարություն, 30-50 լայնություն,
- դարպասի չափերը՝ 5մ x 2մ,

- տուգանային հրապարակը՝ 9մ,
- 11 մետրանոց նշակետը փոխարինել 7 մետրանոց նշակետով,
- խաղացողների քանակը՝ 8 x 8 խաղացող,
- տուգանային, ազատ և անկյունային հարվածների ժամանակ մրցակից թիմի ֆուտբոլիստները պետք է գտնվեն գնդակից նվազագույնը 5մ. հեռավորության վրա,
- «խաղից դուրս» վիճակ գործում է միայն դարպասային գծից զուգահեռ 12մ. առաջ սահմանված տարածքում, /նայիր նկարին/,
- ետ փոխարինում թույլատրվում է:



6. Խաղացանկերը թիմերին ներկայացվում են առաջնությունը սկսվելուց 10 օր առաջ:
7. Երկու և ավելին ֆուտբոլիստներ հավաքական հրավիրվելու դեպքում Ակումբը կարող է դիմել ՀՖՖ-ը խաղը հետաձգելու /տեղափոխելու/ համար, խաղացանոով նախատեսված օրից ոչ ուշ քան 2 օր առաջ:

#### Հոդված 6 Մարզադաշտերը

1. Թիմերը մրցակցին ընդունում են ներկայացնող կազմակերպության «Հավաստագրում» նշված մարզադաշտերում:
2. Առաջնության ընթացքում հանդիպումը այլ մարզադաշտ տեղափոխելու անհրաժեշտության դեպքում հյուրընկալող թիմը պարտավոր է գրավոր դիմել ՀՖՖ, հանդիպումից ոչ ուշ, քան երկու աշխատանքային օր առաջ:
3. Մարզադաշտը պարտադիր պետք է ընդունվի ՀՖՖ-ի կողմից՝ առաջնության խաղերի անցկացնելու թույլտվության համար:
4. Յուրաքանչյուր խաղի համար տվյալ մարզադաշտի պատրաստ լինելը որոշում է խաղի մրցավարը:

#### Հոդված 7 Հյուրընկալող Ակումբի / ներկայացնող կազմակերպության/ պարտականությունները

Մրցումները հյուրընկալող Ակումբները, բացառությամբ Մ13 առաջնության որակավորման փուլի Ա, Բ, Գ, Դ ենթախմբերի մրցաշարերի, պարտավոր են՝

1. Խաղային ժամանակահատվածում մարզադաշտում և դրան հարակից տարածքներում ապահովել հասարակական կարգի պահպանումն ու հանդիպման մասնակիցների անվտանգությունը՝ ոստիկանության ծառայությունների միջոցով: Ոստիկանության աշխատակիցները պետք է լինեն համազգեստով և երկու հոգուց ոչ պակաս: Ոս-

տիկանության թվակազմի բացակայության դեպքում խաղը չի անցկացվում: Մ13Ե առաջնության հանդիպումների ժամանակ հասարակական կարգի պահպանումն ու հանդիպման մասնակիցների անվտանգությունը Ակումբը կարող է ապահովել այլ միջոցներով, իսկ ոստիկանության ծառայությունների ներկայությունը պարտադիր չէ:

2. Ապահովել ոստիկանության ներկայացուցչի մասնակցությունը նախախաղային խորհրդակցությանը / բացի Մ13Ե առաջնության հանդիպումների/:
3. Նախապատրաստել խաղադաշտը խաղին: Հյուրընկալող Ակումբի մեղքով խաղասկզբին խաղադաշտը պատրաստ չլինելու դեպքում խաղը չի կայանում կամ ուշ է սկսվում /եթե, ըստ պահանջների նախապատրաստելու համար լրացուցիչ ժամանակ է պետք/, իսկ Ակումբի հանդեպ կիռարվում են պատժամիջոցներ:
4. Դաշտի տեր թիմը պարտավոր է ապահովել բժշկական ծառայության ներկայությունը խաղադաշտում: Բժշկական ծառայության բացակայության դեպքում խաղը չի անցկացվում:
5. Խաղը չկայացնելու կամ ուշ սկսելու որոշումը պատկանում է խաղի տեսուչին /մրցավարին/:
6. Մ13 առաջնության որակավորման փուլի Ա, Բ, Գ, Դ ենթախմբերի մրցաշարերը ընդունող Ակումբները պարտավոր են ապահովել՝
  - հասարակական կարգի պահպանումը,
  - հանդիպման մասնակիցների անվտանգությունը,
  - խաղադաշտի նախապատրաստումը,
  - խաղին բժշկական ծառայության ապահովումը:

#### **Հոդված 8 Խաղերի կազմակերպումը և սպասարկումը**

1. Խաղը անցկացնելու համար ՀՖՖ-ի մրցավարական բաժինը նշանակում է սպասարկող անձնակազմ:
2. Յուրաքանչյուր խաղից մեկ ժամ առաջ հանդիպման տեսուչը անցկացնում է նախախաղային խորհրդակցություն մրցող թիմերի մարզիչների, ոստիկանության ներկայացուցչի ու մրցավարական խմբի մասնակցությամբ: Խորհրդակցության ընթացքում ճշտվում են խաղի անցկացման պայմաններն ու տրվում համապատասխան հրահանգներ մասնակիցներին:
3. Թիմը համարվում է խաղին «չներկայացած», եթե չի տեղեկացրել տեսուչին /մրցավարին/ ուշացման պատճառների մասին և խաղասկզբին չի ներկայացել:
4. Որևէ թիմի ուշանալու դեպքում մրցավարը /երբ ուշացող թիմը տեղեկացրել է ուշանալու մասին/, խաղի սկիզբը կարող է հետաձգել մինչև մեկ խաղակեսի չափով, որից հետո արձանագրել թիմի չներկայանալու փաստը:
5. Թիմերի ներկայացուցիչները պարտավոր են խաղը սկսելուց ոչ ուշ քան 45 րոպե առաջ խաղի մասնակիցների լրացված և ստորագրված ցուցակը ու նրանց քարտերը /Մ18, Մ17, Մ16Ա և Մ16Բ առաջնություններում մասնակիցների ֆուտբոլային անձնագրերը/ հանձնել մրցավարական անձնակազմին: Խաղի մասնակիցների տեխնիկական հայտը ստորագրող պաշտոնյան պատասխանատու է հայտում նշված ֆուտբոլիստների հետ կապված խախտումների համար: Խաղին կարող են մասնակցել միայն այն ֆուտբոլիստները, իսկ տեխնիկական գոտում գտնվել միայն այն պաշտոնյաները, որոնք նշված են ցուցակում: Քարտերը /ֆուտբոլային անձնագրերը/ թիմերին վերադարձվում են խաղից հետո:
6. Խաղին՝ թիմերի կողմից պաշտոնյա չլինելու դեպքում խաղը չի անցկացվում:
7. Թիմերի պաշտոնյաները /ֆուտբոլիստները/ պարտավոր են խաղի ժամանակահատվածում պատշաճ պահեն իրենց մարզադաշտում /տեխնիկական գոտում և դրա հարակից տարածքում/, չմիջամտեն մրցավարի գործողություններին:
8. Ակումբների /թիմերի պաշտոնյաները/ պարտավոր են վարել ֆուտբոլիստների ստացած զգուշացումների /դեղին քարտերի/ հաշվառումը և կիռարեն Կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի

- պատժամիջոցները՝ առանց Կարգապահական կոմիտեի որոշման, պահպանել որակագրված ֆուտբոլիստների և պաշտոնյաների որակագրված ժամկետները:
9. Ակումբը /թիմը ներկայացնող կազմակերպությունը/ պատասխանատվություն է կրում իր կողմից հայտավորված ֆուտբոլիստների առողջական վիճակի համար: Ֆուտբոլիստները տարին առնվազը մեկ անգամ պետք է անցնեն բժշկական հետազոտում /զննում/: Բուժզննումը անցկացվում է կամ ՀՀ Առողջապահության նախարարության հատուկ պոլիկլինիկայում /սպորտային բժշկական կենտրոնում/, կամ՝ պոլիկլինիկաներում /բուժմիավորներում/:
  10. Մրցավարը պատասխանատու է արձանագրությունում ընդգրկված ֆուտբոլիստների մասնակցության փաստաթղթերի իսկության համար:
  11. Մրցավարները խաղասկզբից առաջ պետք է ստուգեն հիմնական կազմի ֆուտբոլիստների, ինչպես նաև խաղի ընթացքում փոխարինող ֆուտբոլիստների ինքնությունը:
  12. Հանդիպման մրցավարը պարտավոր է տվյալ խաղի արձանագրությունը ներկայացնել ՀՖՖ խաղին հաջորդող աշխատանքային օրը:
  13. Խաղային Ժամանակահատվածում տեղի ունեցած արտակարգ միջադեպերի մասին խաղը սպասարկող մրցավարական անձնակազմի անդամները պարտավոր են զեկուցագրեր ներկայացնել ՀՖՖ խաղին հաջորդող աշխատանքային օրը:
  14. Մ14, Մ13, Մ13Ե առաջնությունների խաղերը անցկացվում են N 4 գնդակով, իսկ Մ18, Մ17, Մ16 և Մ15 առաջնությունների խաղերը՝ N 5 գնդակով:
  15. Խաղի ընթացքում յուրաքանչյուր թիմից միաժամանակ նախավարժանք կարող են կատարել ոչ ավելի, քան 4 ֆուտբոլիստներ՝ տարբերիչ մարզահագուստներով:
  16. Ֆուտբոլիստների վնասվածք ստանալու դեպքում մրցող թիմերի բուժանձնակազմերին խաղադաշտ մտնել թույլատրվում է միայն մրցավարի թույլտվությամբ:
  17. Մրցող թիմերի մարզահագուստի գույների համընկնման դեպքում մարզահագուստը փոխում է դաշտի տեր թիմը:

**Հոդված 9 Ֆուտբոլիստների մասնակցությունը խաղերին և փոխարինումը**

1. Մրցումներին իրավունք ունեն մասնակցել հետևյալ տարիներին ծնված ֆուտբոլիստները՝
  - Մ18՝ 1995-1996-1997թթ.,
  - Մ17՝ 1996-1997-1998թթ.,
  - Մ16՝ 1997-1998-1999թթ.,
  - Մ15՝ 1998-1999-2000թթ.,
  - Մ14՝ 1999-2000-2001թթ.,
  - Մ13Ե, Մ13՝ 2000-2001թթ.:
2. Ֆուտբոլիստները և պաշտոնյաները մրցումներին մասնակցում են մասնակցի քարտով, իսկ Մ18, Մ17, Մ16Ա և Մ16Բ առաջնություններում ֆուտբոլիստները մասնակցում են ֆուտբոլային անձնագրով կամ բացառության կարգով /երկու խաղ/ քաղաքացիական անձնագրով:
3. Մ18 և Մ17 առաջնությունների խաղերի ընթացքում թույլատրվում է փոխարինել 7 ֆուտբոլիստ, Մ16, Մ15 և Մ14 առաջնություններում 9 ֆուտբոլիստ, Մ13Ե և Մ13 առաջնություններում 8 ֆուտբոլիստ:
4. Խաղի արձանագրությունում լրացվում են մինչև 5 պաշտոնյաի, 11 հիմնական /Մ13Ե և Մ13-ում 8 հիմնական/ և համապատասխան առաջնությունում փոխարինման համար նախատեսված պահեստային ֆուտբոլիստների տվյալները:

**Հոդված 10 Մրցումների մասնակիցների հայտավորումը և վերահայտավորումը**

1. Հայտավորվել կամ /վերահայտավորվել/ կարող են այն ֆուտբոլիստները, որոնք գրանցված են թիմը ներկայացնող Ակումբում: 12 տարին չլրացած ֆուտբոլիստներին գրանցում չի պահանջվում:



2. Հայտավորված, սակայն 12 տարին լրանալուց հետո չգրանցված ֆուտբոլիստներին խաղին մասնակից դարձնելու դեպքում, Ակումբը տուգանվում է 3000 դրամ յուրաքանչյուր ֆուտբոլիստի մասնակցության համար:
3. Ֆուտբոլիստների գրանցումը կատարվում է ըստ «Ֆուտբոլիստների կարգավիճակի և տեղափոխության» Կանոնակարգի: Գրանցման համար ներկայացվում է՝
  - դիմում ֆուտբոլիստի գրանցման համար,
  - մեկ գունավոր լուսանկար /3,5x4,5/,
  - անձնագիրը /կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ/, դրա երկրորդ և երրորդ էջերի պատճենը /պարտադիր է 16 տարին լրացված ֆուտբոլիստների համար/, 16 տարին չլրացված ֆուտբոլիստների համար անձնագիր չլինելու դեպքում՝
    - o ծննդյան վկայականը և դրա պատճենը,
    - o հանրակրթական դպրոցից տեղեկանք, որտեղ պետք է փակցված լինի աշակերտի նկարը, նշված լինի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին: Տեղեկանքը ստորագրվում է տնօրենի կողմից և կնքվում: Կնիքը պետք է դրվի նկարի վրա: Տեղեկանքի վրա գետեղված և առանձին ներկայացվող նկարները պետք է լինեն նույնը:
4. Մասնակիցների հայտավորման /վերահայտավորման/ համար լրացվում է ՀՖՖ-ի կողմից սահմանված թերթիկը /հավելված 2/: Պարտադիր լրացման ենթակա են՝
  - Ակումբի /թիմը ներկայացնող կազմակերպության/ անունը: Անունը պետք է համընկնի թերթիկը կնքված կնիքի վրա նշված անվան հետ:
  - Թիմի անունը: Անունը չպետք է համընկնի նույն տարում արդեն հայտավորված թիմերի որևէ մեկի անվան հետ:
  - Հայտավորվող ֆուտբոլիստների ցուցակը /առաջին մասում/, այդ թվում.
    - o ֆուտբոլիստի անձնագրի համարը ըստ ՀՖՖ-ի գրանցման /12 տարին չլրացած ֆուտբոլիստների՝ ՀՖՖ-ում նուտքագրված անձնական համարը/;
    - o ազգանունը, անունը;
    - o ծննդյան /օրը, ամիսը, տարեթիվը/;
  - հայտավորվող պաշտոնյաների ցուցակը /երկրորդ մասում/, լրացվում է նախորդ առաջին երկու կետերը անձի պաշտոնը և հեռախոսահամարը;
  - ակումբի ղեկավարի հաստատումը՝ ղեկավարի ազգանունը, ստորագրությունը, կնքված կազմակերպության կնիքով, ՀՖՖ հայտի /վերահայտավորման/ ներկայացման ամսաթիվը:
 

Անձնական համար չունենալու դեպքում հայտավորման /վերահայտավորման/ թերթիկի հետ 12 տարին չլրացած ֆուտբոլիստների համար ներկայացվում է՝

    - o ծննդյան վկայականը և դրա պատճենը,
    - o հանրակրթական դպրոցից տեղեկանք, որտեղ պետք է փակցված լինի աշակերտի նկարը, նշված լինի ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան օրը, ամիսը, տարին: Տեղեկանքը ստորագրվում է տնօրենի կողմից և կնքվում: Կնիքը պետք է դրվի նկարի վրա: Տեղեկանքի վրա գետեղված և առանձին ներկայացվող նկարները պետք է լինեն նույնը:
5. Վերահայտավորման դեպքում թերթիկում պետք է ընդգրկվեն միայն այն անձինք, որոնք լրացնում են թիմի կազմը:
6. Հայտավորման /վերահայտավորման/ թերթիկի հետ ՀՖՖ-ում գրանցված ֆուտբոլիստների և պաշտոնյաների համար /որոնք ունեն անձնական համար/ լրացուցիչ փաստաթղթեր չի ներկայացվում:
 

Եթե վերահայտավորվող անձը նույն խաղաշրջանում եղել է հայտավորված մեկ այլ թիմում, ապա վերադարձվում է նախորդ թիմում ստացած մասնակցի քարտը:
7. Թույլատրվում է հայտավորել մինչև 25 ֆուտբոլիստ և մինչև 5 պաշտոնյա, Մ13 և Մ13Ե առաջնությանը թույլատրվում է հայտավորել մինչև 20 ֆուտբոլիստ և մինչև 5 պաշտոնյա:

8. Մ13 առաջնության մասնակից թիմերի հայտերը ընդունվում են ս/թ. հոկտեմբերի 15-ից 19-ը, /ըստ ՀՖՖ-ի կողմից հաստատված և ակումբներին ներկայացված լրացուցիչ գրաֆիկի/:
9. Հայտավորման ժամկետը սկսվում է տվյալ առաջնության սկզբից 20 օր առաջ և վերջանում է առաջնության սկզբից 5 օր առաջ, ըստ սահմանված և թիմերին ներկայացվող գրաֆիկի:
10. Վերահայտավորման ժամանակահատված է սահմանվում՝ 2012թ. օգոստոս ամիսը և 2012թ. դեկտեմբերի 11-ից մինչև 2013թ. մարտի 5-ը ընկած ժամանակահատվածը:
11. Սահմանված ժամկետներում վերահայտավորումը անվճար է: Այլ ժամկետներում վերահայտավորելու համար սահմանվում է վճար յուրաքանչյուր ֆուտբոլիստի համար՝
  - Մ18, Մ17, Մ16, Մ15 առաջնություններում՝ 1000 դրամ,
  - Մ14, Մ13Ե, Մ13 առաջնություններում՝ 500 դրամ:
12. Ակումբի /թիմի/ պաշտոնյաների վերահայտավորումը ժամկետային սահմանափակում չունի և անվճար է:
13. Ցանկացած պարագայում թիմի հայտավորված ֆուտբոլիստների կազմը չպետք է գերազանցի 25-ը, իսկ պաշտոնյաներինը՝ 5-ը:
14. Այն ակումբները, որոնք առաջնություններում կունենան միայն մեկ թիմ, պետք է հայտավորեն նվազագույնը երկու պաշտոնյա:

**Հոդված 11 Բողոքարկումները և բողոքները**

1. Բողոքարկումը Ակումբի կողմից ՀՖՖ ներկայացված գրավոր դիմում է, որը նպատակ ունի չեղյալ համարել խաղի արդյունքը, և/կամ վերախաղարկել այն:
2. Բողոքարկումը ընդունվում և գրանցվում է ՀՖՖ-ում, եթե ակումբի լիազորված անձը (նախագահ, թիմի պետ, գլխավոր մարզիչ) խաղից հետո պաշտոնապես դիմել է տեսուչին՝ լրացնելով խաղի արձանագրության համապատասխան բաժինը:
3. Բողոքարկման պատճառ կարող են հանդիսանալ՝
  - չհայտավորված ֆուտբոլիստների մասնակցությունը խաղին,
  - խաղի տևողության հետ կապված անհամաձայնությունը,
  - մրցավարի կողմից կանոնակարգային դրույթների խախտում/ներ/ը, որը (որոնք) ազդել է/են հանդիպման արդյունքի վրա:
4. Բողոքարկման ենթակա չեն մրցավարի կայացրած փաստացի որոշումները:
5. Բողոքը Ակումբի կողմից ներկայացված ՀՖՖ գրավոր դիմում է, որը խաղը վերախաղարկելու նպատակ չունի և ուղղված է խաղին խոչընդոտող հանգամանքները վերացնելուն, մեղավոր անձանց պատժելուն և հետագայում նման խախտումներ թույլ չտալուն:
6. Բողոքները, կապված խաղադաշտի նշագծումների կամ դարպասների չափերի հետ, կարող են ներկայացվել միայն խաղի տեսուչին ոչ ուշ, քան խաղից 1,5 ժամ առաջ:
7. Բողոքարկումները և բողոքները ՀՖՖ ներկայացվում են ոչ ուշ, քան մինչև խաղին հաջորդող աշխատանքային օրվա վերջը:
8. Բողոքարկումները կամ բողոքները քննարկվում են ՀՖՖ համապատասխանաբար 10 000 և 6 000 դրամ մուծելուց (փոխանցելուց) հետո, մեկ շաբաթվա ընթացքում:
9. Բողոքարկման կամ բողոքի համար ՀՖՖ մուծված գումարը վերադարձվում է միայն բոլոր կետերով հիմնավորված ճանաչվելու դեպքում:

**Հոդված 12 Մրցաշարային աղյուսակում թիմերի դասակարգումը**

1. Թիմերը Առաջնության աղյուսակում դասակարգվում են ըստ վաստակած միավորների: Հաղթանակի համար տրվում է 3 միավոր, ոչ-ոքիի համար՝ 1 միավոր, պարտության դեպքում միավոր չի տրվում:
2. Երկու և ավելի թիմերի միավորների հավասարության դեպքում առաջնության հաղթողը որոշվում է լրացուցիչ խաղով (խաղերով), որի (որոնց) անցկացման ժամկետները

և կարգը որոշում է ՀՖՖ-ն: Աղյուսակում մնացած տեղերի դասակարգման ժամանակ առավելությունը տրվում է այն թիմին, որը.

- հավակնորդ թիմերի միմյանց հետ խաղերում վաստակել է ավելի շատ միավոր,
- հավակնորդ թիմերի միմյանց հետ խաղերում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- բոլոր հանդիպումներում ունի խփած և բաց թողած գնդակների լավագույն տարբերություն,
- բոլոր հանդիպումներում խփել է ավելի շատ գնդակ,
- վիճակահանությամբ:

### **Հոդված 13 Լավագույնների որոշման կարգը և պարզկատրումները**

1. Առաջնություններում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղ գրաված թիմերը, ֆուտբոլիստները և մարզչական կազմը պարզկատրվում են ՀՖՖ-ի դիպլոմներով, /պարզկատրվող պաշտոնյաների կազմը պետք է գրավոր ներկայացվի Ակումբի ղեկավարության կողմից և որոնք պետք է հայտավորված լինեն Ակումբի որևէ թիմի կազմում/: Մ18, Մ17, Մ16Ա, Մ15Ա, Մ14Ա և Մ13 առաջնություններում առաջին տեղ գրաված թիմերը պարզկատրվում են փոխանցիկ գավաթով:
2. Լավագույն մարզիչ ճանաչվում է առաջնությունում առաջին տեղ գրաված թիմի մարզիչը:
3. Լավագույն ֆուտբոլիստները ըստ խաղադիրքի՝ /դարպասապահ, պաշտպան, կիսապաշտպան և հարձակվող/ որոշվում են մանկապատանեկան կոմիտեի կողմից, հրավիրելով մանկապատանեկան կոմիտեի ընդլայնված նիստի քննարկմանը առաջնություններում առաջին չորս տեղը գրաված թիմերի մարզիչներին:
4. Լավագույն ռմբարկու/ներ/ ճանաչվում է/են/ առաջնությունում մրցակցի դարպասը առավելագույն անգամ գրաված ֆուտբոլիստը/ները/:
5. Տվյալ առաջնության լավագույնները պարզկատրվում են դիպլոմներով և հուշանվերներով:
6. Տվյալ առաջնությունում բոլորից քիչ տուգանային միավոր (կարմիր քարտի դեպքում՝ 5, դեղին քարտի դեպքում՝ 1 միավոր), (կլ որոշումներ խաղը չկայանալու կամ անավարտ մնալու դեպքում՝ 5, նախախաղային խորհրդակցությանը չմասնակցելու /ուշանալու/, խաղը ուշ սկսելու դեպքում՝ 1 միավոր) ստացած թիմը նվաճում է «Արդար խաղի» մրցանակը, պարզկատրվում է հուշանվերով և դիպլոմով: «Արդար խաղի» մրցապայքարում երկու կամ ավելի թիմերի հավասար արդյունքի դեպքում մրցանակը հանձնվում է առաջնությունում ավելի բարձր տեղ գրաված թիմին:

### **III. Եզրափակիչ դրույթներ**

#### **Հոդված 14 Մ13 առաջնության Ա, Բ, Գ, Դ ենթախմբերի խաղերի մարզադաշտերը**

1. Բոլոր այն Ակումբները, որոնք ցանկություն ունեն Մ13 առաջնության Ա, Բ, Գ, Դ ենթախմբերի կենտրոնացված մրցումները անցկացնեն իրենց մարզադաշտում, պետք է մինչև սեպտեմբերի 7-ը գրավոր հայտ և երաշխավորագիր ներկայացնեն ՀՖՖ:
2. Մարզադաշտերի ընտրությունը ՀՖՖ-ի կողմից կկատարվի ըստ ներկայացված հայտերի և կտեղեկացվի լրացուցիչ:

#### **Հոդված 15 Կանոնակարգի ուժի մեջ մտնելը**

1. Սույն կանոնակարգը ուժի մեջ է մտնում հաստատման օրից և գործում է մինչև 2012-2013թթ. մրցաշրջանի ավարտը:
2. Սույն Կանոնակարգով չնախատեսված դեպքերում և **արտակարգ իրավիճակներում** վերջնական որոշումը կայացվում է ՀՖՖ-ի Գործադիր կոմիտեի կողմից:

\_\_\_\_\_ կազմակերպությունը /քաղաքապետարանը, գյուղապետարանը, մարզադպրոցը, հանրակրթական դպրոցը կամ այլ կազմակերպություններ/ լիովին ընդունելով ՀՖՖ-ի հիմնարար փաստաթղթերը, այդ թվում նաև 2012-13թթ. պատանեկան մրցումների անցկացման կանոնակարգը, **հաստատում է** կազմակերպության ներքոհիշյալ թիմի /երի/ մասնակցությունը 2012-13թթ. պատանեկան մրցումներին:

	թիմի անվանումը	առաջնությունը	տնային խաղերի անցկացման մարզադաշտի անվանումը
1			
2			
3			
4			
5			
6			
7			

Մեր կազմակերպությունը **պարտավորվում է** հոգալ թիմի/երի/ ծախսերը, ինչպես նաև, Մրցումների անցկացման կանոնակարգը նրա/նց/ կողմից խախտելու դեպքում, մուծել ՀՖՖ-ի սահմանված ֆինանսական տուգանքները:

Ակումբը մարել է նախկին պարտքերը

Կազմակերպության ղեկավար՝

/ \_\_\_\_\_ /  
Ազգանուն, անուն

Կ.Տ.

«    » \_\_\_\_\_ 2012թ.



## ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄ / ՎԵՐԱՀԱՅՏԱՎՈՐՈՒՄ

/ընդգծել/

Հայաստանի 2012-13թթ. մրցաշրջանի մինչև \_\_\_\_\_ տ. առաջնության մասնակիցների

\_\_\_\_\_  
/թիմը ներկայացնող կազմակերպություն/

\_\_\_\_\_  
/պատասխանատուի հեռախոսը/

\_\_\_\_\_  
/թիմի անվանումը/

### Ղեկավար կազմ

h/h	Անձնական քարտի համարը	Ազգանուն, Անուն	Պաշտոնը	Հեռախոսը
1				
2				
3				
4				
5				

### Ֆուտբոլիստներ\*

h/h	ՀՖՖ-ում գրանցման համարը	Ազգանուն, Անուն	Ծննդյան օր, ամիս տարի	Ծանոթություն
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				
11				
12				
13				

14				
15				
16				
17				
18				
19				
20				
21				
22				
23				
24				
25				

\* 12 տարեկան լրացած ֆուտբոլիստները պետք է նախորոք գրանցված լինեն ՀՖՖ-ում ներկայացնող կազմակերպության ֆուտբոլիստների ցուցակում:

Վերը նշված ֆուտբոլիստները անցել են համապատասխան բժշկական զննում և թույլատրվում են մրցումներին մասնակցելու:

Թիմը ներկայացնող  
կազմակերպության ղեկավար

/ \_\_\_\_\_ /

“ \_\_\_ “ \_\_\_\_\_ 2012թ.

Կ.Տ.